Հավելված
Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարի
2022 թվականի 11 03 -ի
N 2826-Լ հրամանի

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության (այսուհետ՝ ԱԳՆ) վարչական շենք (հասցե՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան փողոց 3, Կառավարական տուն 2) ճանաչողական այցերի (այսուհետ՝ այցեր) կազմակերպման, անցկացման և այցերի ծրագրի կազմման կարգն ու պայմանները:

2. Այցերը կազմակերպվում են ՀՀ դիվանագիտական ծառայության կազմակերպման, ղեկավարման, դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության մասին հանրության իրազեկվածության բարձրացման նպատակով:

3. Այցերը կազմակերպվում են ԱԳՆ լրատվության և հանրային դիվանագիտության (այսուհետ՝ ԼՀԴ) վարչության կողմից՝ ԱԳՆ այլ կառուցվածքային ստորաբաժանումների և ԱԳՆ դիվանագիտական դպրոցի հետ համագործակցությամբ:

2. ԱՅՑԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

4. Այցերը կազմակերպվում են Հայաստանի, Արցախի և օտարերկրյա պետությունների բուհերի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի, ավագ դպրոցների աշակերտների և ուսուցչամանկավարժական կազմի համար՝ համապատասխան ուսումնական հաստատության ղեկավարների կողմից ներկայացված գրավոր հայտադիմումի հիման վրա: Այցերը կարող են կազմակերպվել նաև դիվանագիտական ակումբների, մասնագիտացված դասընթացների մասնակիցների և այլ խմբերի համար՝ ըստ հայտադիմումի բավարարման նպատակահարմարության:

5. Այցերի համար դիմումները ներկայացվում են ոչ ուշ, քան նախատեսվող այցից 2 շաբաթ առաջ: Այցերի համար հայտերը հասցեագրվում են ԱԳՆ գլխավոր քարտուղարին և ուղարկվում են փոստով՝ թղթային տարբերակով կամ էլեկտրոնային փոստով՝ press@mfa.am հասցեին:

6. Դիմումին պարտադիր կցվում է այցելուների ընդհանուր ցուցակը՝ նրանց անհատական տվյալներով (անուն, ազգանուն, հայրանուն), ինչպես նաև այցելուների խմբի ղեկավարի, հետադարձ կապի հեռախոսահամարը՝ էլեկտրոնային փոստի հասցեի նշումով: Ցուցակին անհրաժեշտ է կցել նաև խմբի ղեկավարի անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը, որի բնօրինակը այցելուների խմբի ղեկավարը ԱԳՆ մուտք գործելիս հսկիչ-անցագրային կետում ներկայացնում է ոստիկանին:

7. Այցի կազմակերպման համաձայնությունը, ԼՀԴ վարչության պետի առաջարկով, տալիս է ԱԳՆ գլխավոր քարտուղարը:

8. ԱԳՆ այցը կազմակերպվում է աշխատանքային օրերին և ժամերին, և կարող է տևել ոչ ավելի, քան 2 ժամ:

9. Այցն իրականացվում է ԱԳՆ-ում սահմանված պահպանության և անցագրային ռեժիմի կազմակերպման կարգի համաձայն: Այցի ընթացքում մասնակիցների կողմից շենքի և հանդիպումների տեսալուսանկարահանում կամ ձայնագրություն չի թույլատրվում:

10. Յուրաքանչյուր այց կազմակերպվում և անցկացվում է ԼՀԴ վարչության կողմից մշակված հիմնական ծրագրով, որն ըստ անհրաժեշտության կարող է փոփոխվել:

3. ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԻ ԾՐԱԳԻՐԸ

11. Այցելուներն ԱԳՆ շենք մուտք են գործում ոչ հիմնական մուտքի անցագրային կետով և ուղեկցվում են ասուլիսների սրահ (104 սենյակ), որտեղ նրանց ներկայացվում է այցի ծրագիրը և նպատակները, բացատրվում են շենքում վարվեցողության կանոնները՝ լռությունը պահպանելու, խմբից չառանձնանալու և նախարարության բնականոն աշխատանքին չխանգարելու վերաբերյալ:

12. Դիվանագիտական դպրոցի հետ համաձայնությամբ այցը Դիվանագիտական դպրոցից սկսելու դեպքում այցելուները ծանոթանում են Դիվանագիտական դպրոցի գործունեությանը և տեղեկանում են ԱԳՆ գործունեությանը և կառուցվածքին: Հնարավորության դեպքում այցելուները հանդիպում են Դիվանագիտական դպրոցի տնօրենի հետ: Այցի՝ Դիվանագիտական դպրոցում տեղի ունեցող հատվածը համաձայնեցվում է դիվանագիտական դպրոցի անձնակազմի հետ:

13. Դիվանագիտական դպրոցից հետո խումբն այցելում է 6-րդ հարկ, ծանոթանում գրադարանին և որպես ԱԳՆ կառուցվածքային ստորաբաժանման օրինակ՝ ԼՀԴ վարչության աշխատանքին:

14. Գրադարանում այցելուներին ներկայացվում է ԱԳՆ գործունեությունը, կառուցվածքը, հայկական դիվանագիտական ծառայության նպատակը, հայկական դիվանագիտության առաջնահերթությունները, ցուցադրվում է ԱԳՆ պատմությունը, գործունեությունը, ձեռքբերումները ներկայացնող մեդիա նյութ:

15. Այնուհետև այցելուները շուրջ 30 րոպե հանդիպում են ունենում ԱԳ նախարարի տեղակալներից մեկի կամ գլխավոր քարտուղարի հետ, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝ ԱԳՆ կառուցվածքային ստորաբաժանումներից մեկի ղեկավարի հետ: Բանախոսը, ներկայացնելով ՀՀ ԱԳՆ և դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեությունը, հնարավորինս անդրադառնում է տվյալ խմբին հետաքրքրող հարցերին:

16. Առկայության դեպքում այցելուներին կարող են տրամադրվել նաև հուշանվերներ (օրինակ՝ գրիչ, էլեկտրոնային կրիչ, կրծքանշան կամ նոթատետր) կամ ուսումնական հաստատությանը՝ գրքեր: Ժամանակի առկայության դեպքում դասախոսությունից հետո կարող է տեղի ունենալ խաղ-մրցույթ՝ ստացված գիտելիքներն ամրապնդելու համար, իսկ հաղթողները կարող են խրախուսվել խորհրդանշական մրցանակներով:

17. Հնարավորության դեպքում խումբը ծանոթանում է նաև ԱԳՆ 7-րդ կամ 9-րդ հարկերում գտնվող հիմնական հանդիպումների սրահներին:

18. Այցն ավարտվում է ԱԳՆ հիմնական մուտքի դրոշների մոտ խմբակային լուսանկարով, որն այնուհետև տրամադրվում է խմբի ղեկավարին: Այցերը լուսաբանվում են ԼՀԴ վարչության կողմից՝ ըստ նպատակահարմարության: